Direct ակնաբուժական գործիքներ

Օֆտալմոսկոպ
Ռետինոսկոպ
Օտոսկոպ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ



Keeler
– A world without vision loss –

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ 3

2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 4

2.1 ՖՈՏՈՏՈՔՍԻԿՈՒԹՅՈՒՆ 4

2.2 ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ 4

2.3 ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

3. ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ 8

3.1 ՍՏԵՐԻԼԻԶԱՑՈՒՄԸ 8

4. ԳՈՐԾԻՔԻ ԳԼԽԻԿՆԵՐ 9

4.1 ՕԺՏԱԼՄՈՒՄՆԵՐ 9

4.2 ՈՍՊՆՅԱԿԻ ԱՆԻՎ 10

4.3 ՈՍՊՆՅԱԿՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒԹՅՈՒՆԸ 10

4.4 ՄԱՍՏՏԱԲԱՑԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 10

4.5 ՖԻԼՏՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 11

4.6 ՌԵՏԻՆՈՍԿՈՊՆԵՐ 12

4.7 ՕՏՈՍԿՈՊՆԵՐ 12

4.8 ԼԱՄՊԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 14

5. ԳՈՐԾԻՔԻ ԲՌՆԱԿՆԵՐ 15

5.1 ԲՌՆԱԿԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ 16

5.2 ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՉԵՏԵՂՈՒՄԸ/ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 16

5.3 ԱՆՑՈՒՄԸ ՄԱՐՏԿՈՑՈՑ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՎՈՂ ԲՌՆԱԿՆԵՐԻ 16

5.4 ՄԱՐՏԿՈՑԻ ՕԴՈՐԱԿՈՒՄԸ 16

6. GENMED ՊԱՏԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՄԱՍ 17

6.1 ԱՄՐԱՑՈՒՄԸ ՊԱՏԻՆ 17

6.2 ՍՆՈՒՑՄԱՆ ԲԼՈԿ 18

6.3 ԳՈՐԾԻՔԻ ԳԼԽԻԿԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՊԱՏԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՄԱՍԻ ԲՌՆԱԿԻՆ 18

6.4 ՈՒՏԻԼԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ 19

7. ԼԻԹԻՈՒՄԱՑԻՆ ՄԻՆԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉ և ԼԻԹԻՈՒՄԱՑԻՆ ԿՐԿՆԱԿԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉ ... 19

7.1 ԷԼԵՐԳԱԶԱՏԱԿԱՐՈՒՄ 19

8. ԵՐԱՇԽԻՔ 20

9. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20

9.1 ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ 21

9.2 ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 21

9.3 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱԽՏԱՆՑ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

10. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ 24

11. ՊԱՐԱԳԱՆԵՐ և ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ 25

12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 27

	Ծանոթացեք օգտագործման հրահանգներին		Ընդհանուր նախազգուշական նշան
	Արտադրության ամսաթիվ		Նախազգուշացում. Էլեկտրաէներգիա
	Արտադրողի անուն և հասցե		Նախազգուշացում. Հատակային խոչընդոտ
	Արտադրող երկիր		Նախազգուշացում. Ոչ իոնացնող ճառագայթում
	Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների (ԷԷՍԹ) վերամշակում		Նախազգուշացում. Օպտիկական ճառագայթում
	Այս կերպ վեր		Նախազգուշացում. Տաք մակերես
	Պահել չոր		Եվրոպական համապատասխանություն
	Փխրուն		B տիպի կիրառական մասը
	Մի օգտագործեք, եթե փաթեթը վնասված է		2-րդ կարգի սարքավորումներ
	Ջերմաստիճանի սահման		Մթնոլորտային ճնշման սահմանափակում
EC REP	Եվրոպական համայնքի լիազոր ներկայացուցիչ		Խոնավության սահմանափակում
REF	Կատալոգի համար	SN	Սերիական համար
	Թարգմանություն	MD	Բժշկական սարք

Keeler արտադրության ակնաբուժական և Direct սարքերը նախագծվել և ստեղծվել են 93/42/ԵՏՀ հրահանգի, 2017/745 կանոնակարգի (ԵՄ) և ISO 13485 Բժշկական սարքերի որակի կառավարման համակարգերի համաձայն:

Դասակարգում. ԵԽ. Դաս I

ՍԴՎ. Դաս II

Սույն ձեռնարկում պարունակվող տեղեկատվությունը չպետք է ամբողջությամբ կամ մասամբ վերարտադրվի՝ առանց արտադրողի նախնական գրավոր հաստատման: Որպես արտադրանքի շարունակական զարգացման մեր քաղաքականության մաս, միայն մեզ՝ արտադրողին է իրավունք վերապահվում փոփոխություններ կատարել տեխնիկական պայմանների և այս փաստաթղթում պարունակվող այլ տեղեկատվության մեջ՝ առանց նախնական ծանուցման:

Սույն ՕՀ-ն հասանելի է նաև Keeler UK և Keeler USA կայքերում:

Հեղինակային իրավունք՝ © Keeler ՍՊԸ 2021թ.. Հրապարակված է Մեծ Բրիտանիայում՝ 2021 թ.-ին:

Օֆտալմոսկոպներ.
Pocket, պրոֆեսիոնալ, գործնական բժշկի, մասնագետի, ստանդարտ

Ռետինոսկոպներ.
Պրոֆեսիոնալ համակցված, կետային, գծային

Օտոսկոպներ.
Օպտիկամանրաթելային, Pocket, պրոֆեսիոնալ, ստանդարտ

Բռնակներ.
Pocket, Slimline, GenMed պատի բլոկ

Լիցքավորիչներ.
Լիթիումային երկակի լիցքավորիչ, լիթիումային մինի լիցքավորիչ

1. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Այս սարքերը նախատեսված են օգտագործել միայն պատշաճ կերպով վերապատրաստված և լիազորված առողջապահության ոլորտի մասնագետների կողմից:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ Դաշնային օրենքը սահմանափակում է բժշկի կամ գործող մասնագետի կողմից կամ պատվերով այս սարքի վաճառքը:

Սարքի նպատակային օգտագործում / նպատակ

Keeler օֆտալմոսկոպը նախատեսված է աչքի հետին հատվածը հետազոտելու համար, որը կոչվում է հատակ, ինչը թույլ է տալիս իրականացնել ցանցաթաղանթի պաթոլոգիայի զննումը և ախտորոշումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով, այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ կատարակտը, պապիլոէդեման, գլաուկոմատոզային սկավառակի փորվածքը, դիաբետիկ ռետինոպաթիան, հիպերտոնիկ ռետինոպաթիան և ցանցաթաղանթի տարանջատումները: Բարձր հզորության և խոշորացման դեպքում այն կարող է նաև օգտագործվել աչքի առջևի հատվածի հետազոտման համար, դրանց թվում՝ կոպերը, եղջերաթաղանթը, սկլերան, լորձաթաղանթը, ծիածանաթաղանթը, ջրային թաղանթը, բյուրեղային ոսպնյակը և ապակենման մարմնի առջևի մասը:

Keeler ռետինոսկոպը նախատեսված է աչքի բեկման վիճակի օբյեկտիվ գնահատման համար: Հետևելով ցանցաթաղանթի կարմիր ռեֆլեքսին՝ այն նաև տեսողական համակարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու միջոց է հանդիսանում, օրինակ՝ միջավայրի և ոսպնյակների անթափանցիկության, ակնաբուժական զգալի շեղումների և հարմարվողականության կարգավիճակի մասին:

Keeler օտոսկոպը նախատեսված է արտաքին լսողական ուղիների, թմբկաձև թաղանթի և միջին ականջի առողջական վիճակի հետազոտման համար: Օտոսկոպիան կարող է թույլ տալ հայտնաբերել ականջի վիճակը, ներառյալ, բայց չսահմանափակվելով ականջի ցավը, ականջի ախտահարումը, լսողության կորուստը, ականջներում զանգը, բորբոքումն ու օտար մարմինները:

2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2.1 ՖՈՏՈՏՈՔՍԻԿՈՒԹՅՈՒՆ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ Այս սարքից ճառագայթող լույսը պոտենցիալ վտանգ է ներկայացնում: Ինչքան երկար է ազդեցության տևողությունը, այնքան մեծ է աչքի վնասման ռիսկը: Առավելագույն ուժգնությամբ աշխատելիս այս սարքից ճառագայթող լույսի ազդեցությունը գերազանցում է անվտանգության ուղեցույցները 4 ժամ 20 րոպեից:

Համապատասխան ախտորոշում կատարելիս խորհուրդ ենք տալիս ըստ հնարավորության հիվանդի ցանցաթաղանթ հասնող նվազագույն ուժգնության լույս կիրառել, չնայած նրան, որ օֆտալմոսկոպի/ռետինոսկոպի համար օպտիկական ճառագայթման սուր վտանգներ որպես այդպիսին հայտնաբերված չեն: Առավել վտանգված են երեխաները, աֆակիայով և աչքի հիվանդություններով տառապող մարդիկ: Բարձր ռիսկը կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ ցանցաթաղանթը 24 ժամվա ընթացքում ենթարկվում է տեսանելի լույսի աղբյուր ունեցող նույն կամ նմանատիպ սարքի ազդեցությանը: Սա վերաբերում է, մասնավորապես, եթե ցանցաթաղանթը նախապես լուսանկարվել է լուսաբռնկման կիրառմամբ:

Ըստ պահանջի, Keeler ՍՊ ընկերությունը օգտագործողին գծապատկեր է տրամադրում, որը ցույց է տալիս գործիքի սպեկտրալ հարաբերական ելքը:

2.2 ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Խնդրում ենք հաշվի առնել, որ մեր սարքերի պատշաճ և անվտանգ աշխատանքը երաշխավորվում է միայն այն դեպքում, երբ սարքերն ու դրանց լրացուցիչ մասերը/աքսեսուարները ձեռք են բերվում բացառապես Keeler ՍՊԸ-ից: Այլ պարագաների օգտագործումը կարող է առաջացնել սարքի բարձր էլեկտրամագնիսական արտանետումներ կամ ցածր էլեկտրամագնիսական դիմադրողականություն և հանգեցնել դրա սխալ աշխատանքի:

Սարքերի անվտանգ գործարկումն ապահովելու համար ծանոթացեք հետևյալ նախազգուշացումների հետ:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

- Երբեք մի օգտագործեք սարքը, եթե կան տեսանելի վնասվածքներ և պարբերաբար ստուգեք այն՝ վնասվածքների կամ թերօգտագործման նշանների հայտնաբերման համար:
- Նախքան օգտագործումը ստուգեք ձեր Keeler արտադրանքը՝ տեղափոխման/պահեստավորման հետ կապված վնասների նշանների հայտնաբերման համար:
- Սարքը չի թույլատրվում օգտագործել դյուրավառ գազերի/հեղուկների առկայությամբ կամ թթվածնով հարուստ միջավայրում:
- ԱՄՆ Դաշնային օրենքը սահմանափակում է այս սարքի վաճառքը բժշկի կամ մասնագետի կողմից կամ պատվերով:
- Այս սարքը նախատեսված է օգտագործել միայն պատշաճ կերպով վերապատրաստված և լիազորված առողջապահության ոլորտի մասնագետների կողմից:
- Այս արտադրանքը չպետք է ընկղմվի հեղուկի մեջ:
- Էլեկտրաէներգիայի անջատիչը և ցանցային խրոցը սարքը ցանցից մեկուսացնելու միջոց են. համոզվեք, որ և՛ հոսանքի անջատիչը, և՛ ցանցային խրոցն անընդհատ հասանելի լինեն:
- Սարքը չպետք է տեղադրել այնպես, որ դժվար լինի սեղմել հոսանքի անջատիչը կամ հեռացնել ցանցային խրոցը վարդակից:



- Նախքան մաքրումը և ստուգումը անջատեք հոսանքի սնուցումը և անջատեք էլեկտրական ցանցից:

- Եթե սարքավորումն արտասովոր հոտ, ջերմություն կամ ծուխ է արձակում, անմիջապես դադարեցրեք օգտագործումը: Վնասված սարքավորման կամ մասի շարունակական օգտագործումը կարող է մարմնական վնասվածքներ առաջացնել:
- Միաժամանակ ձեռք մի տվեք լիցքավորման կայանի կամ ձեռքի բլոկի տերմինալի կոնտակտներին կամ տերմինալի կոնտակտներին և հիվանդին:



ՉԳՈՒՇԱՑՈՒՄ

- Օգտագործեք միայն Keeler-ի կողմից հաստատված բնօրինակ պահեստամասեր և պարագաներ, որպեսզի սարքի անվտանգությունն ու աշխատանքը չվտանգվեն:
- Օգտագործեք միայն Keeler-ի կողմից հաստատված մարտկոցներ, լիցքավորիչներ և սնուցման բլոկներ, որոնք նշված են 11-րդ բաժնի աքսեսուարների ներքո:
- LED մոդուլի հակադարձ համատեղելիությունը չի փորձարկվել:
- Այս արտադրանքի անվտանգ գործարկումն ապահովվում է +10°C-ից +35°C շրջակա միջավայրի ջերմաստիճանի պայմաններում:
- Ռեֆրակցիոն կանգնակի տարբերակները կամ հարմարիչները պետք է օգտագործվեն միայն EN/IEC 60601-1 և EN/IEC 60601-1-2 ստանդարտի համապատասխան սնուցման բլոկների և սարքերի հետ համատեղ:
- Հեռու պահեք երեխաների հասանելիությունից:
- Կոնդենսացիայի առաջացումը կանխելու համար սարքն օգտագործելուց առաջ բերեք սենյակային ջերմաստիճանի:
- Միայն փակ տարածքներում օգտագործման համար (պաշտպանել խոնավությունից):
- Սարքի ներսում չկան օգտագործողի կողմից սպասարկվող մասեր: Լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք սպասարկման լիազոր ներկայացուցչի հետ:
- Համոզվեք, որ սարքը ապահով է տեղադրված բազային կայանում՝ սարքավորումը վնասելու կամ մարմնական վնաս հասցնելու ռիսկը նվազագույնի հասցնելու համար:
- Հետևեք մաքրման / կանոնավոր տեխնիկական սպասարկման վերաբերյալ ցուցումներին՝ մարմնական վնասվածքը / սարքավորման վնասը կանխելու համար:
- Սույն ՕՀ-ում ներկայացված հրահանգների համաձայն կանոնավոր սպասարկումը չկատարելու դեպքում կարող է նվազեցնել արտադրանքի շահագործման ժամկետը:
- Արտադրանքի շահագործման ժամկետը լրանալուց հետո թափոնացրեք այն համաձայն տեղական բնապահպանական ցուցումների (ԷԷՍԹ):
- Սարքավորումը մեկուսացնելու համար հանեք այն ցանցից կամ անջատեք ցանցից:
- Արտադրանքը և ականջի ընդարձակիչները տրամադրվում են ոչ ստերիլ վիճակով: Չօգտագործեք վնասված մաշկային հյուսվածքի վրա:
- Օգտագործեք նոր կամ ախտահանված ընդարձակիչներ՝ խաչածև աղտոտման ռիսկը սահմանափակելու համար:
- Օգտագործված ականջի ընդարձակիչների ուտիլացումը պետք է կատարվի վարակիչ, կենսաբանական բժշկական թափոնների ուտիլացման վերաբերյալ գործող բժշկական գործառնականության կամ տեղական կանոնակարգերին համապատասխան:

Լիցքավորիչներ



- Մի զետեղեք հոսանքի հարմարիչը վնասված ցանցային վարդակի մեջ:



- Էլեկտրական լարերը տեղակայեք անվտանգ կերպով՝ վերացնելու օգտագործողների սայթաքման կամ վնասվելու ռիսկը:

- Keeler լիթիումային լիցքավորիչներում կարող են օգտագործվել միայն կարմիր հիմքով Keeler բռնակներ: Մի զետեղեք կապույտ հիմքով Keeler բռնակ տեղադրել Keeler լիթիումային լիցքավորիչների մեջ: Անդրադարձեք Keeler բռնակի և լամպի նույնականացմանը:

Direct գործիքներ

- Գործիքների գլխիկները բռնակներին միացնելիս համոզվեք, որ գործիքի լամպի լարումը համապատասխանում է բռնակի լարմանը:
- Գլխիկները բռնակներին տեղադրելիս պետք է զգույշ լինել, որպեսզի մաշկը չմնա մասերի միջև:
- Ստուգումն ավարտելուց հետո համոզվեք, որ կառավարումը գտնվում է անջատված դիրքում:
- Keeler պրոֆեսիոնալ ռետինոսկոպների մեջ ուժեղ մագնիսներ կան: Կարդիոստիմուլյատորները և մագնիսական եղանակով պահվող տվյալները կենթարկվեն ազդեցության կամ կվնասվեն մագնիսների կողմից:
- Ուժեղ մագնիսական դաշտերը կարող են ազդել կամ խախտել զգայուն էլեկտրոնային կամ մեխանիկական թեստավորման գործիքները: Շատ զգայուն սարքերը կարող են նույնիսկ շարքից դուրս գալ: Միշտ մագնիսները նման սարքերից ապահով հեռավորության վրա պահեք:
- Մի օգտագործեք Keeler ռետինոսկոպները կամ օֆտալմոսկոպները 35°C-ից բարձր շրջակա միջավայրի պայմաններում:
- Մեկանգամյա օգտագործման ընդարձակիչները չպետք է օգտագործվեն ինսուֆլյացիայի փորձարկման համար:
- Բազմակի օգտագործման պլաստիկ ընդարձակիչը կփչանա, եթե ենթարկվի ուլտրամանուշակագույն լույսի, չոր ջերմության կամ գամմա ճառագայթահարման: Ստերիլիզացման այս մեթոդները չպետք է օգտագործվեն:
- Այս սարքը պետք է օգտագործվի միայն ակնաբուժական սարքերի օգտագործման վերապատրաստում անցած բժիշկների կողմից:

Մարտկոցներ և LED-եր

- Մի օգտագործեք դեֆորմացված, արտահոսք ունեցող, քայքայված կամ արտաքնապես վնասված մարտկոց: Զգույշ վերաբերվեք վնասված կամ արտահոսք ունեցող մարտկոցի հետ: Եթե էլեկտրոլիտը լցվի ձեր վրա, լվացեք տվյալ տարածքը օճառով և ջրով: Եթե այն լցվի աչքերի մեջ, անմիջապես դիմեք բժշկի:
- Համոզվեք, որ մարտկոցի դիրքը ճիշտ է, այլապես կարող է առաջանալ մարմնական վնասվածք կամ վնասել սարքավորումը:
- Մի օգտագործեք տարբեր տեսակների մարտկոցներ:
- Մի փորձեք լիցքավորել չվերալիցքավորվող մարտկոցները:
- Մի լիցքավորեք մարտկոցը այնպիսի միջավայրում, որտեղ ջերմաստիճանը կարող է գերազանցել 35˚C-ը կամ 10˚C-ից ցածր լինել:
- Վերալիցքավորվող մարտկոցը փոխելիս անջատեք բռնակը և տեղադրեք նոր մարտկոցը:

Տեղը դրեք ներքևի կափարիչը և բռնակը դրեք լիցքավորման բլոկի մեջ:

- Կարճ միացման դեպքում վերաակտիվացրեք մարտկոցը՝ դնելով բռնակը լիցքավորիչի մեջ մինչև LED լույսը առկայծի: Սա ներկառուցված պաշտպանիչ սարք է՝ մարտկոցը վնասներից պաշտպանելու համար:
- Չոր ակումուլյատորային մարտկոցները պետք է հեռացվեն, եթե գործիքը երկար ժամանակ չի օգտագործվելու:
- Մի ապամոնտաժեք կամ փոփոխեք մարտկոցի կառուցվածքը: Սարքի մեջ սպասարկվող մասեր չկան
- Մարտկոցը մի նետեք կրակի մեջ, մի ծակեք կամ կարճ միացման մի ենթարկեք:
- Մարտկոցները ուտիլացրեք համաձայն տեղական բնապահպանական կանոնակարգումների:
- Փաթաթեք մեկուսիչ ժապավենով մարտկոցի կոնտակտները՝ ուտիլացման ժամանակ կարճ միացումից խուսափելու համար:

- Մարտկոցը հանելուց հետո միաժամանակ ձեռք մի տվեք մարտկոցի կոնտակտներին և հիվանդին:
- Նշում՝ Լիթիում-իոնային և NiMH մարտկոցները չեն պարունակում թունավոր ծանր մետաղներ, ինչպիսիք են՝ սնդիկը, կադմիումը կամ կապարը:
- Մի գերազանցեք առավելագույն առաջարկվող ազդեցության ժամանակը:

- Միշտ համոզվեք, որ բռնակի ռեոստատը անջատված է նախքան գործիքի գլխիկը տեղադրելը կամ լամպը փոխելը:

- Լամպերը / LED լամպերը օգտագործման ժամանակ կարող են հասնել բարձր ջերմաստիճանի. նախքան կիրառումը դրանք պետք է սառչեն: Օֆտալմոսկոպը և ռետինոսկոպը չպետք է անընդմեջ միացված լինեն 15 րոպեից ավել: Եթե դրանք լիցքավորման դիրքում կամ միացված են մնացել 15 րոպե կամ ավելի շատ, ապա դրանք պետք է անջատվեն և թողնվեն, որ սառչեն առնվազն 10 րոպե՝ մինչև հաջորդ օգտագործումը:

- Հալոգեն լամպերի հետ պետք է զգույշ լինել: Քերծվելու կամ վնասվելու դեպքում հալոգեն լամպերը կարող են կոտրվել:

- Լամպը / LED լույսը հանելուց հետո միաժամանակ ձեռք մի տվեք լամպի / LED լույսի կոնտակտներին և հիվանդին:

- Անդրադարձեք լամպը փոխելու էջ 14 վերաբերյալ հրահանգներին:

2.3 ՀԱԿԱՍՈՒՑՈՒՄՆԵՐ

Հիվանդների բնակեցման համար որևէ սահմանափակում չկա, որոնց հետ այս սարքը կարող է օգտագործվել՝ բացի ստորև նշված հակացուցումներից:

Լուսավորության բարձր մակարդակի պատճառով օֆտալմոսկոպը և ռետինոսկոպը կարող են որոշակի անհանգստություն առաջացնել ֆոտոֆոբ հիվանդների մոտ:

Բբալայնիչ դեղամիջոցները, երբ օգտագործվում են ռետինոսկոպիայի և օֆտալմոսկոպիայի մեջ, կարող են առաջացնել աղոտ տեսողության և ֆոտոֆոբիայի ժամանակավոր ախտանիշներ: Բբալայնիչ կաթիլների հանդեպ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են:

Օտոսկոպիայի հետ կապված շատ քիչ ռիսկեր կան: Որոշ հիվանդների մոտ կարող է նկատվել մի փոքր անհանգստություն պրոցեդուրայի ընթացքում, հատկապես ընդարձակիչը ուռած և բորբոքված ականջի ուղու մեջ մտցնելու ժամանակ: Եթե օտոսկոպի պլաստիկ գլխիկը պատշաճ կերպով չի փոխվել կամ մաքրվել, վարակը կարող է անցնել մեկ ականջից մյուսին:

3. ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Սարքի կամ դրա բազային բլոկի ցանկացած մաքրում իրականացնելուց առաջ պետք է համոզվել, որ հոսանքի լարն անջատված լինի:

Այս սարքի մաքրումը պետք է իրականացվի միայն ձեռքով՝ առանց հեղուկի մեջ ընկղմման, ինչպես նկարագրված է: Սարքը չի թույլատրվում ստերիլիզացնել կամ սուզել մաքրող հեղուկների/նյութերի մեջ: Մաքրումից առաջ միշտ պետք է անջատել էլեկտրասնուցումը աղբյուրից:

1. Արտաքին մակերեսը պետք է սրբել մաքուր ներծծող, մազմզուկներից զերծ կտորով, որը նախօրոք խոնավացվել է ապիոնիզացված ջրի/լվացող միջոցների լուծույթով (ըստ ծավալի 2% լվացող միջոց) կամ ջրի/իզոպրոպիլային սպիրտի լուծույթով (70% ԻՊԱ՝ ըստ ծավալի): Խուսափեք օպտիկական մակերևույթներից:
2. Համոզվեք, որ ավելցուկային լուծույթը չթափանցի սարքի մեջ: Զգուշացեք, որպեսզի կտորը չգերիագենա լուծույթով:
3. Մակերևույթները պետք է զգուշորեն չորացվեն ձեռքով՝ օգտագործելով մաքուր մազմզուկներից զերծ կտոր:
4. Ապահով կերպով թափեք օգտագործված մաքրող նյութերը:

3.1 ՍՏԵՐԻԼԻԶԱՑՈՒՄԸ

Բազմակի օգտագործման պլաստիկ ընդարձակիչը կփչանա, եթե ենթարկվի ուլտրամանուշակագույն լույսի, չոր ջերմության կամ գամմա ճառագայթահարման: Ստերիլիզացման այս մեթոդները չպետք է օգտագործվեն:


1. Բազմակի օգտագործման ընդարձակիչը չպետք է կրկնակի անգամ օգտագործվի, եթե տեսանելի կերպով աղտոտված է ականջի դեղնագույն աղտով, ականջի ջրահեռացումով կամ արյունով: Ուտիլացրեք ապահով կերպով:
2. Ձեռքով մաքրեք մասերի բոլոր մակերևույթները հարմար խոզանակով և դեհոնացված ջրով/լվացող միջոցի լուծույթով (2% լվացող միջոց՝ ըստ ծավալի): Համոզվեք, որ ընդարձակիչի կախովի տարբերակները մաքրվում են ինչպես բաց, այնպես էլ փակ դիրքերում: Համոզվեք, որ բոլոր խորշերը հասանելի են: Լուծույթը կարող է տաքացվել 35°C-ից ոչ ավելի:
3. Զգույշ ուսումնասիրեք՝ համոզվելու համար, որ բոլոր տեսանելի աղտոտումները մաքրվել են:
4. Ապահով կերպով թափեք օգտագործված մաքրող նյութերը:
5. Ստերիլացրեք գոլորշու հաստատված ստերիլիզատորի միջոցով, որը համապատասխանում է BS 3970 կամ համարժեք ստանդարտին: Աշխատանքային ցիկլի պայմանները նշված են ստորև. 134 - 138°C ստերիլիզացման ջերմաստիճանը 2,25 բար աշխատանքային ճնշման տակ՝ նվազագույնը 3 րոպե պահման ժամանակով:
6. Մաքրման և/կամ ստերիլիզացման գործընթացներից հետո սարքը ստուգեք՝ համոզվելու համար, որ բոլոր տեսանելի աղտը հեռացված է, և սարքը գործում է ըստ նախատեսվածի և հարմար է նախատեսված օգտագործման համար: Մի օգտագործեք, եթե վնասված է: Ուտիլացրեք ապահով կերպով:
7. Սարքի օգտակար շահագործման ժամկետը որոշվում է օգտագործման ընթացքում առաջացած մաշվածությամբ և վնասվածով:

Մեկանգամյա օգտագործման ընդարձակիչ – օգտագործեք մեկ անգամ և ուտիլացրեք ապահով կերպով:


4. ԳՈՐԾԻՔԻ ԳԼԽԻԿՆԵՐ

4.1 ՕՖՏԱԼՄՈՍԿՈՊՆԵՐ


Մասնագետ




Ստանդարտ



Pocket



Բժիշկ / Պրոֆեսիոնալ



4.2 ՈՍՊՆՅԱԿԻ ԱՆԻՎ

Ոսպնյակի անիվը պտտվում է՝ անհրաժեշտ ոսպնյակն ընտրելու համար: Ոսպնյակների հզորությունները ցուցադրվում են հետևյալ կերպ դիտման պատուհանում.

Սև = (+) օպտիկական հզորությամբ ոսպնյակներ

Կարմիր = (-) օպտիկական հզորությամբ ոսպնյակներ

Ոսպնյակի օժանդակ անիվ

Թեքվում է +/- 20 դիօպտրի մեկ քայլով* (*միայն պրոֆեսիոնալների համար):

Մասնագետի ոսպնյակի օժանդակ անիվ

Պտտեք, որպեսզի հավասարեցնեք +10, +15, +30/ -10, -15, -30 դիօպտրի ոսպնյակները:

4.3 ՈՍՊՆՅԱԿՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագետ
+44D-ից -45D մեկ դիօպտրի քայլում

Պրոֆեսիոնալի
+29D-ից -30D մեկ դիօպտրի քայլում

Բժշկի և ստանդարտ
+40D-ից –25D

Pocket
+20D-ից –20D

4.4 ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մասշտաբային ցանցի կառավարման միջոցով ընտրվում է անհրաժեշտ լուսարձակումը ստուգման համար: Մասշտաբային ցանցերի ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ:



Լայն անկյուն
Լուսավորում է հատակի ամենամեծ տարածքը՝ լայնացած բիբի միջոցով հնարավոր ամենալավ ընդհանուր ախտորոշման համար:



Միջանկյալ
Հեշտացնում է մուտքը չլայնացած բիբի միջոցով օժանդակ հետազոտման ընթացքում: Հատկապես օգտակար է մանկաբուժական հետազոտման համար:



Բծավոր
Հատուկ նախատեսված է հատակի բծավոր տարածքը դիտելու համար: Նվազեցնում է լայնացման ռեակցիան և բարելավում հիվանդի հարմարավետության զգացողությունը:



Ճեղք
Հիմնականում օգտագործվում է ցանցաթաղանթի դիրքի բարձրացումները և փոքրացումները հայտնաբերելու համար, բայց կարելի է նաև օգտագործել աչքի առջևի խցիկը ստուգելու համար:



Գլաուկոմա
Արտապատկերում է մասշտաբային ցանց ցանցաթաղանթի վրա՝ օպտիկական սկավառակի/փորվածքի հարաբերակցությունը ստուգելու համար՝ որպես գլաուկոմայի ախտորոշման և վերահսկման միջոց:



Ֆիքսացիայի խաչ
Արտապատկերում է մասշտաբային ցանց ցանցաթաղանթի վրա՝ էքսցենտրիկ ֆիքսացիայի աստիճանն ու ուղղությունը ստուգելու համար: Սա հատկապես օգտակար է երեխաների հետազոտման ժամանակ:

Մասշտաբային ցանցի ընդգրկույթը յուրաքանչյուր օֆտալմոսկոպի համար հետևյալն է.


Մասնագետ

Պրոֆեսիոնալի

Բժշկի

Ստանդարտ

Pocket



4.5 ՖԻԼՏՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆիլտրի կառավարումը* օգտագործվում է անհրաժեշտ ֆիլտրը ընտրելու համար:

(*Միայն պրոֆեսիոնալի/բժշկի/ստանդարտ:)

Ֆիլտրի կիրառումը



Առանց կարմիրի (կանաչ ֆիլտր)

Օգտագործվում է անոթները մանրակրկիտ հետազոտելու համար: Կանաչ ֆիլտրը արգելափակում է կարմիր ճառագայթները, որոնք արյան անոթները սև են ցույց տալիս մուգ կանաչ ֆոնի վրա: Այս ֆիլտրը հատկապես օգտակար է դիաբետիկ ռետինոպաթիայի համար:




Կոբալտի կապույտ*

Օգտագործվում է ֆլուորեսցեինային ներկերի հետ միասին եղջերաթաղանթի սպիերը և քերծվածքները հայտնաբերելու և հետազոտելու համար: (*Միայն բժշկի և մասնագետի):

Պուպիլոմետր*

Պահեք պուպիլոմետրը հիվանդի աչքի մոտ՝ բիբի չափը ստուգելու համար: 1=1 մմ: Ընդգրկույթը՝ 1 մմ-ից 8 մմ: (*Վերաբերում է միայն մասնագետներին:)

4.6 ՌԵՏԻՆՈՍԿՈՊՆԵՐ



Կիզակետման և առանցքի կառավարում (Շերտագծով)

Վերգենցիան փոփոխվում է՝ սահեցնելով կիզակետման կառավարումը վերև և ներքև, ինչպես ցույց է տրված: Վերին դիրքում գոգավոր հայելու էֆեկտ ունի: Միջին դիրքը շերտագիծ է ստեղծում հիվանդի հետևում: Միջին դիրքի միջոցով որոշվում է ցանկացած աստիգմատիզմի առկայությունն ու առանցքը: Ստորին դիրքում ցրող հարթ հայելու էֆեկտ ունի: Ճառագայթաբեկումը սովորաբար իրականացվում է միջին դիրքի և ներքևի դիրքի միջև: Կիզակետման և առանցքի կառավարումը կարող է անընդհատ պտտվել ցանկացած ուղղությամբ:

Կիզակետման և առանցքի կառավարում (Կետային)

Վերգենցիան փոփոխվում է՝ սահեցնելով կիզակետման կառավարումը վերև և ներքև, ինչպես ցույց է տրված: Բոլոր դիրքերի համար էֆեկտը հարթ հայելու էֆեկտ է:

Հոնքերի հենակ

Keeler ռետինոսկոպը տրամադրվում է հոնքերի հենակի ընտրությամբ՝ ակնոց կրողներին հարմար լինելու համար: Հոնքերի հենակի տեղերը փոխելու համար անջատեք և կցեք, ինչպես ցույց է տրված:


Բացվածքի կառավարում

Բացվածքի կառավարումն ունի երկու դիրք: Խոշոր բացվածքից փոքրին անցնելու համար սահեցրեք կառավարը ձախից աջ, ինչպես ցույց է տրված:


4.7 ՕՏՈՍԿՈՊՆԵՐ


Յուրաքանչյուր օտոսկոպի / հավաքակազմի հետ տրամադրվում է հինգ մշտական ընդարձակիչ: Հետևյալ տրամագծերով. 2.5, 3.5, 4.5, 5.5 և 8 մմ: Դրանք կցվում են օտոսկոպի գլխիկին, ինչպես ցույց է տրված հետևյալ գծապատկերներում:

Ստանդարտ / Pocket



Օպտիկամանրաթելային **Բժշկի**





Միանգամյա օգտագործման ընդարձակիչ

Միանգամյա օգտագործման ընդարձակիչը կարող է հարմարեցվել ստանդարտ, բժշկի, օպտիկամանրաթելային և Pocket օտոսկոպներին:

Օդաճնշական փորձարկումներ

Օտոսկոպին կարող է տեղադրվել ներծծող խողովակ, որը հնարավորություն կտա իրականացնել օդաճնշական փորձարկումներ:

Բժշկի, ստանդարտ, Pocket և օպտիկամանրաթելային օտոսկոպների դեպքում միացրեք ներծծող հարմարիչը միացքին: Այնուհետև ներծծող խողովակը կարելի է կցել դրան:

Ներծծող հարմարիչը նաև հասանելի է բժշկի համար, ինչպես ցույց է տրված վերևում:

Փոքր վիրաբուժական պրոցեդուրաներ

Եթե ցանկանում եք օգտագործել վիրաբուժական գործիքներ փոքր պրոցեդուրաների համար, հետևյալ նշումները կարող են օգտակար լինել:

Ստանդարտ և Pocket օտոսկոպներ

Խոշորացույցը կարելի է հեռացնել, որպեսզի հնարավոր լինի մտցնել վիրաբուժական գործիքները:

Օպտիկամանրաթելային / Բժշկի

Օպտիկամանրաթելային խոշորացույցը կարելի է տեղափոխել մի կողմ կամ ամբողջությամբ հանել, որպեսզի հնարավոր լինի մտցնել վիրաբուժական գործիքները:

4.8 ԼԱՄՊԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Լամպերը / LED լամպերը օգտագործման ժամանակ կարող են հասնել բարձր ջերմաստիճանի. նախքան կիրառումը դրանք պետք է սառչեն:

- Միշտ համոզվեք, որ բռնակի ռեոստատը անջատված է նախքան գործիքի գլխիկը տեղադրելը կամ լամպը փոխելը:

- Հալոգեն լամպերի հետ պետք է զգույշ լինել: Քերծվելու կամ վնասվելու դեպքում հալոգեն լամպերը կարող են կոտրվել:

- Լամպը / LED լույսը հանելուց հետո միաժամանակ ձեռք մի տվեք լամպի / LED լույսի կոնտակտներին և հիվանդին:
- Keeler լամպերը կարող են օգտագործվել միայն այն գործիքի մեջ, որի համար դրանք նախատեսված են. անդրադարձեք 11-րդ բաժնում ներկայացված մասերի համարների ցանկին: Համոզվեք, որ փոխարինվող լամպի լարումը համապատասխան է: Տես լամպի հիմքի վրա:


  Կապույտ = 2.8 Վ չոր ակումուլյատորային մարտկոցների բռնակների համար:

  Կարմիր = 3.6 Վ վերալիցքավորվող բռնակների համար:

  Սև = LED:




- Թուլացրեք գործիքի գլխիկը բռնակին ամրացնող պտուտակը: (Միայն GenMed պատին ամրացվող մասի դեպքում)
- Հեռացրեք գլխիկը՝ մի ձեռքով այն հորիզոնական պահելով, իսկ մյուսով պտտելով բռնակը ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:
- Համոզվեք, որ մարտկոցը / լամպը չի ընկնում, երբ գլխիկն ու բռնակը առանձնացվում են:
- Հանեք անսարք լամպը և ուտիլացրեք այն՝ համաձայն տեղական բնապահպանական կանոնակարգերի:




- Լամպը փոխեք ճիշտ լարումով և ճիշտ տեսակի լամպով: Համոզվեք, որ տեղադրության բանալին հավասարեցված է գործիքի գլխիկի բացվածքին:
- Հարմարեցրեք բռնակը գլխիկին՝ հորիզոնական դիրքով պտտելով այն ժամացույցի սլաքի ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում ամրացրեք գլխիկը տեղում՝ փաթեթի հետ տրամադրված պտուտակով: (Միայն GenMed պատին ամրացվող մասի դեպքում)

5. ԳՈՐԾԻՔԻ ԲՌՆԱԿՆԵՐ

Slimline




Pocket



Գործիքի գլխիկների միացումը բռնակին

Գործիքի գլխիկի միացումը բռնակին կատարվում է պտուտակային պարուրակի միջոցով: Մեր գործիքի գլխիկը միացնելու համար միացեք այնպես, ինչպես ցույց է տրված և պտտեք ժամացույցի սլաքի ուղղությամբ: Համոզվեք, որ միացումը գլխիկի և բռնակի միջև դրական է:



Համատեղելիություն

Keeler մասնագետի, պրոֆեսիոնալ, ստանդարտ և բժշկի օֆտալմոսկոպները և Keeler ռետինոսկոպները համատեղելի են Keeler 2.8V և 3.6V Keeler բռնակների հետ:

Keeler LED մոդուլը համատեղելի է միայն Keeler 2.8V և 3.6V slimline բռնակների հետ:



Պայծառության միացման / անջատման կառավարում

Գործիքը միացնելու համար պտտեք պայծառության կառավարը աջ, ինչպես ցույց է տրված:

Գործիքն անջատելու համար պտտեք պայծառության կառավարը ձախ, ինչպես ցույց է տրված:

Keeler Slimline բռնակները հոսանքի սնուցման ցուցիչ ունեն: Դա ցույց է տալիս գործիքի միացման կամ անջատման կարգավիճակը:



5.1 ԲՌՆԱԿԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Keeler slimline բռնակները կոդավորված են գույներով, ինչը թույլ է տալիս ձեզ տարբերակել չոր ակումուլյատորային մարտկոցի բռնակը (2.8v) և վերալիցքավորվող բռնակը (3.6v):

Բռնակները և Keeler լամպերը գույներով կոդավորված են հետևյալ կերպ.

Կապույտ հիմք = 2.8 Վ չոր ակումուլյատորային մարտկոցների համար:



Կարմիր հիմք = 3.6 Վ վերալիցքավորվող մարտկոցների համար:

Սև հիմք = LED չոր ակումուլյատորային և վերալիցքավորվող մարտկոցների համար:

- Մարտկոցներն ու լամպերը փոխելիս համոզվեք, որ լարումը համապատասխանում է բռնակին:

Մինչև գործիքի գլխիկը հանելը՝ անջատեք լիցքավորիչից:

Հին մարտկոցները ուտիլացրեք ապահով կերպով:

5.2 ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՉԵՏԵՂՈՒՄԸ/ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Թուլացրեք մարտկոցի կափարիչի պտուտակները, տեղադրեք մարտկոցները և տեղադրեք մարտկոցի կափարիչը, ինչպես ցույց է տրված էջ 15:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ Keeler վերալիցքավորվող բռնակները սովորաբար տրամադրվում են վերալիցքավորվող մարտկոցի հետ մեկտեղ (3.6 Վ):

Չոր ակումուլյատորային մարտկոցներ

Հարկավոր է օգտագործել հետևյալ չոր ակումուլյատորային մարտկոցները.

- Keeler Pocket բռնակ – 2 x AA չափի չոր ակումուլյատորային մարտկոցներ – Duracell MN 1500 կամ համարժեքը:

5.3 ԱՆՑՈՒՄԸ ՄԱՐՏԿՈՑԻՑ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՎՈՂ ԲՌՆԱԿՆԵՐԻ

Keeler 2.8 Վ slimline (կապույտ հիմքով) չոր ակումուլյատորային մարտկոցի բռնակը կարելի է նորացնել 3.6 Վ (կարմիր հիմքով) վերալիցքավորվող բռնակով: Պահանջվող մասերի համարների մանրամասների համար անդրադարձեք 11-րդ բաժնին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ գործիքի լամպը նույնպես պետք է նորացվի 2.8 Վ-ից 3.6 Վ-ով:

Մարտկոցի լիցքավորումը

- Մի փորձեք լիցքավորել չվերալիցքավորվող մարտկոցները:

5.4 ՄԱՐՏԿՈՑԻ ՕԴՈՐԱԿՈՒՄԸ

Keeler վերալիցքավորվող մարտկոցները պետք է օդորակվեն՝ համոզվելու համար, որ արտադրանքը գործարկվում է առավելագույն ժամկետով: Հետևեք նշված օդորակման հրահանգներին:

Քայլ 1

Ամբողջությամբ լիցքավորեք նոր Keeler վերալիցքավորվող մարտկոցը: Սա մոտավորապես 15 ժամ կտևի:

Քայլ 2

Գործիքն օգտագործեք առանց վերալիցքավորման՝ մինչև մարտկոցն ամբողջովին դատարկվի:

Քայլ 3

Դատարկվելուց հետո մարտկոցը վերալիցքավորեք մինչև լրիվ լցվի: Սա մոտավորապես 15 ժամ կտևի:

Կրկնեք 1-ին, 2-րդ և 3-րդ քայլերը երեք անգամ, այսինքն՝ ամբողջությամբ լիցքավորեք և լիցքավորեք մարտկոցը երեք անգամ՝ օդորակման գործընթացն ավարտելու համար: Վերոնշյալ ձևով մարտկոցներն օդորակելուց հետո կարող եք հետազոտությունների ընթացքում գործիքը տեղադրել լիցքավորիչի մեջ, երբ չի օգտագործվում:


Լիցքավորիչի համատեղելիությունը

- Keeler վերալիցքավորվող բռնակները կարող են միայն օգտագործվել Keeler-ի հետևյալ լիցքավորիչներում.
  - Keeler մինի լիցքավորիչ
  - Keeler երկակի լիցքավորիչ
- Նշում՝ Ձեռքի ախտորոշման գործիքները օգտագործման և լիցքավորման ընթացքում կարող են տաքանալ:


6. GENMED ՊԱՏԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՄԱՍ

6.1 ԱՄՐԱՑՈՒՄԸ ՊԱՏԻՆ

Ստուգեք հեռավորությունը պատի վարդակից մինչև նախատեսված ամրացման դիրքը:





Gen Med պատին ամրացվող մասերի համար երկու անցք ծակեք Ø6 մմ x 55 մմ խորությամբ և 100 մմ հեռավորության վրա:



Դիսպենսերային մասի համար ևս երկու անցք ծակեք՝ առկա անցքերից 249 մմ ներքև:

Ամրացրեք GenMed պատին ամրացվող մասը և դիսպենսերային մասը, ինչպես ցույց է տրված:





6.2 ՍՆՈՒՑՄԱՆ ԲԼՈԿ

Տեղադրեք խրոցակը

Անհրաժեշտության դեպքում փոխարինեք իսցափակիչը էլեկտրական ցանցի համապատասխան խրոցակի հարմարիչով կամ օգտագործեք IEC 60320 TYPE 7 ստանդարտի միակցիչ (չի տրամադրվում հետը):

Խնդրում ենք նկատի ունենալ.

- Էլեկտրամագնիսական միջամտությունը կարող է ազդել այս էլեկտրական սարքավորման վրա:
- Մոտակայքում գտնվող այլ էլեկտրական սարքավորումները նույնպես կարող են ազդեցություն կրել GenMed պատին ամրացվող մասից:
- Եթե այդպիսի ազդեցությունների կասկած կա, անջատեք միջամտություն առաջացնող սարքավորումը:


6.3 ԳՈՐԾԻՔԻ ԳԼԽԻԿԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՊԱՏԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՄԱՍԻ ԲՌՆԱԿԻՆ


Գործիքի գլխիկը պետք է պտուտակով մտնի բռնակի մեջ, ինչպես ցույց է տրված:


Անվտանգության լրացուցիչ նկատառումներից ելնելով՝ գործիքի գլխիկները կարող են կողպվել Keeler լարի բռնակների վրա՝ ամրացնելով ներկառուցված պտուտակը հետը տրամադրված վեցանկյուն բանալիով:

Անհրաժեշտ գործիքը օգտագործելու համար հեռացրեք համապատասխան բռնակն իր հենակալից, ինչպես ցույց է տրված:

Երբ լարի բռնակը հանվի իր հենակալից, դեղին լույսը (LED) կվառվի: Դա տեղի կունենա անկախ նրանից՝ գործիքի գլխիկը տեղադրված է, թե ոչ:







Երբ գործիքն այլևս պետք չլինի, միշտ համոզվեք, արդյոք բռնակը ճիշտ է դրվել իր հենակալին և, որ LED-ն անջատվել է:

Միաժամանակ կարող է օգտագործվել միայն մեկ բռնակ: Նախքան մյուս գործիքն օգտագործելը փոխեք բռնակը:

Օֆտալմոսկոպի, օտոսկոպի և ռետինոսկոպի գլխիկների կառավարման և շահագործման վերաբերյալ տեղեկությունների համար անդրադարձեք 5-րդ բաժնի հրահանգներին:

6.4 ՈՒՏԻԼԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ


Ընդարձակիչը հանելու համար պարզապես բռնեք անհրաժեշտ ընդարձակիչի ծայրը և զգուշությամբ քաշեք ուղղահայաց դիրքով: Երբ դիսպենսերի խողովակը դատարկ լինի, կրկին պատվիրեք ընդարձակիչը EP59-48483 ձևի միջոցով:

Հանեք կափարիչը մասից և դրեք անհրաժեշտ խողովակը:

7. ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ՄԻՆԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉ և ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ԿՐԿՆԱԿԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉ

7.1 ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հավաքեք էլեկտրամատակարարումը 7-րդ բաժնի հրահանգների համաձայն և միացրեք լարը լիցքավորիչի էլեկտրական հոսանքի մուտքային միացքին:



Լիցքավորումը

Առանց LED լույսի	Մարտկոցը ամբողջովին լիցքավորված է:
Առկայծող LED լույս	Լիցքավորվում է (չի ցուցադրվում NiMH մարտկոցով)
Հաստատուն LED լույս	Մարտկոցը լիցքավորվում է

Բռնակը կարող է օգտագործվել լիցքավորման փուլի ցանկացած պահին և ավտոմատ կերպով կվերսկսի լիցքավորումը, երբ բռնակը նորից տեղադրվի լիցքավորման բլոկում:


Մինի լիցքավորիչն օգտագործելիս բռնակը կարող է մնալ տեղում:

- Լիցքավորման ընթացքում գործիքը չպետք է օգտագործվի:

Լիցքավորման փուլ

Լիթիում-իոնային մարտկոցն ամբողջությամբ լիցքավորելու համար կպահանջվի մոտ 2-3 ժամ: Լիթիում-իոնային մարտկոցը ամբողջ հզորությամբ կաշխատի մոտ 2-3 ժամ:

NiMH մարտկոցն ամբողջությամբ լիցքավորելու համար կպահանջվի մոտ 1-2 ժամ: NiMH մարտկոցն ամբողջ հզորությամբ կաշխատի մոտ 1-2 ժամ:



8. ԵՐԱՇԽԻՔ

Keeler-ի ձեր արտադրանքն ունի 3 տարի երաշխիքային ժամկետ և այն անվճար կփոխարինվի կամ կվերանորոգվի հետևյալ պայմաններով.

- Սխալ արտադրության հետ կապված ցանկացած թերության պատճառով:
- Եթե այս սարքն ու աքսեսուարներն օգտագործվել են սույն հրահանգներին համապատասխան:
- Ցանկացած հայցի հետ տրամադրվում է գնումը հաստատող փաստաթուղթ:

Խնդրում ենք նկատի ունենալ.

- Մարտկոցներն ունեն 1 տարի երաշխիքային ժամկետ:
- LED լամպերն ունեն 5 տարի երաշխիքային ժամկետ:
- Լամպերը չունեն երաշխիքային ժամկետ:

Արտադրողը մերժում է ցանկացած պատասխանատվություն և երաշխիքային պարտավորություններ, եթե սարքը որևէ ձևով խափանվում է կամ պարբերական սպասարկումը բաց է թողնվում կամ կատարվում է այնպես, որ չի համապատասխանում արտադրողի այս հրահանգներին:

Այս սարքում օգտագործողի կողմից սպասարկվող մասեր չկան: Ցանկացած սպասարկում կամ վերանորոգում պետք է իրականացվի միայն Keeler ՍՊԸ-ի կամ պատշաճ կերպով վերապատրաստված և լիազորված դիստրիբյուտորների կողմից: Սպասարկման ձեռնարկները հասանելի կլինեն Keeler- ի լիազորված սպասարկման կենտրոնների և Keeler- ի կողմից վերապատրաստված սպասարկող անձնակազմի համար:

9. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Keeler Direct գործիքները և դրա հետ կապված էներգահամակարգերը բժշկական էլեկտրական գործիքներ են: Այս սարքերը պահանջում են հատուկ խնամք՝ կապված էլեկտրամագնիսական համատեղելիության (EMC) հետ: Այս բաժինը նկարագրում է դրա պիտանիությունը այս գործիքների էլեկտրամագնիսական համատեղելիության տեսանկյունից: Այս սարքերը տեղադրելիս կամ օգտագործելիս խնդրում ենք ուշադիր կարդալ և ուսումնասիրել այստեղ նկարագրվածը:

Դյուրակիր կամ շարժական տիպի ռադիոհաճախականության հաղորդակցման միավորները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ այս սարքերի վրա՝ հանգեցնելով անսարքության:

Գործիքների գլխիկներն ու բռնակները համարվում են էկոլոգիական տեսանկյունից (EMC) անվտանգ[1], բացի GenMed պատին ամրացվող մասից, որին վերաբերում է հետևյալ աղյուսակը, բացի լիթիումային լիցքավորիչներից:

[1] Անդրադարձեք ուղեցույցի բաժին 1.4.4-ին՝ 2014/30/ԵՄ EMC հրահանգների համար (մարտի 1, 2018 թ):

9.1 ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ

Ուղեցույց և արտադրողի հայտարարագիր՝ Էլեկտրամագնիսական ճառագայթում

Keeler Direct գործիքները նախատեսված են ստորև նշված էլեկտրամագնիսական միջավայրում օգտագործելու համար: Հաճախորդը կամ օգտագործողը պետք է համոզվի, որ դրանք օգտագործվում են նման միջավայրում:

Ճառագայթման փորձարկում		**Համապատասխանություն**	**Էլեկտրամագնիսական միջավայր - ուղեցույց**
Միայն լիցքավորիչների և GenMed պատին ամրացվող մասի դեպքում	ՌՀ ճառագայթում CISPR 11	Խումբ 1	Keeler լիցքավորիչները և էլեկտրահամակարգերը ՌՀ էներգիան օգտագործում են միայն իրենց ներքին գործառնականության համար: Հետևաբար, ՌՀ ճառագայթումը շատ ցածր է և, ամենայն հավանականությամբ, չի կարող միջամտել մոտ տեղադրված էլեկտրոնային սարքավորման աշխատանքին:
	ՌՀ ճառագայթում CISPR 11	Դաս Բ	Keeler լիցքավորիչները և էլեկտրահամակարգերը հարմար են բոլոր հաստատություններում օգտագործման համար, այդ թվում նաև՝ տնային պայմաններում և այն հաստատություններում, որոնք անմիջապես միացված են հանրային ցածր լարման էլեկտրամատակարարման ցանցին, որոնք կենցաղային նպատակներով մատակարարում են շենքերին
Հարմոնիկ ճառագայթում IEC 61000-3-2		Դաս Բ	
Լարման տատանումներ/թարթող ճառագայթում IEC 61000-3-3		Համապատասխանում է	

Մարտկոցով աշխատող Keeler Direct գործիքներն էկոլոգիական տեսանկյունից (EMC) համարվում են անվտանգ[1], ուստի ընդգրկված չեն սույն բաժնի դրույթներում:

[1] Անդրադարձը ուղեցույցի բաժին 1.4.4-ին՝ 2014/30/ԵՄ EMC հրահանգների համար (մարտի 1, 2018 թ):

9.2 ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույց և արտադրողի հայտարարագիր՝ Էլեկտրամագնիսական դիմադրողականություն

Keeler Direct գործիքները նախատեսված են ստորև նշված էլեկտրամագնիսական միջավայրում օգտագործելու համար: Հաճախորդը կամ օգտագործողը պետք է համոզվի, որ դրանք օգտագործվում են նման միջավայրում:

Դիմադրողականության փորձարկում	**IEC 60601 Փորձարկման մակարդակ**	**Համապատասխանության մակարդակ**	**Էլեկտրամագնիսական միջավայր - ուղեցույց**
Էլեկտրաստատիկ էներգիայի պարպում (ESD): IEC 61000-4-2	± 8 կՎ կոնտակտ ± 15 կՎ օդ	± 8 կՎ կոնտակտ ± 15 կՎ օդ	Հատակները պետք է լինեն փայտե, բետոնե կամ կերամիկական սալիկապատ: Եթե հատակները ծածկված են սինթետիկ նյութով, ապա օդի հարաբերական խոնավությունը պետք է լինի առնվազն 30%:

Դիմադրողականության փորձարկում	IEC 60601 Փորձարկման մակարդակ	Համապատասխանության մակարդակ	Էլեկտրամագնիսական միջավայր - ուղեցույց
Էլեկտրականության արագ անցումներ/պոռթկումներ: IEC 61000-4-4	± 2 կՎ Էլեկտրամատակարարման գծերի համար ± 1 kV կՎ Մուտքային/ելքային էլեկտրամատակարարման գծերի համար	± 2 կՎ էլեկտրամատակարարման գծերի համար Հ/Չ *± 1 կՎ մուտքային/ելքային էլեկտրամատակարարման գծերի համար	Ցանցի էլեկտրաէներգիայի որակը պետք է համապատասխանի տիպիկ մասնագիտական առողջապահական հաստատության միջավայրին: *Միայն GenMed պատին ամրացվող մասը
Լարման տատանում: IEC 61000-4-5	± 1 կՎ գծ(եր)ից գիծ(եր) ± 2 կՎ գծ(եր)ից հողանցում	± 1 կՎ գծ(եր)ից գիծ(եր) Հ/Չ	Ցանցի էլեկտրաէներգիայի որակը պետք է համապատասխանի տիպիկ մասնագիտական առողջապահական հաստատության միջավայրին:
Էլեկտրամատակարարման մուտքային գծերի լարման անկումներ, կարճ ընդհատումներ և լարման տատանումներ: IEC 61000-4-11	U_T = 0% 0.5 շրջան (0, 45, 90, 135, 180, 225, 270, 315°) U_T = 0%; 1 շրջան U_T = 70%; 25/30 շրջաններ (@ 0°) U_T = 0%; 250/300 շրջան	U_T = 0% 0.5 շրջան (0, 45, 90, 135, 180, 225, 270, 315°) U_T = 0%; 1 շրջան U_T = 70%; 25/30 շրջաններ (@ 0°) U_T = 0%; 250/300 շրջան	Ցանցի էլեկտրաէներգիայի որակը պետք է համապատասխանի տիպիկ մասնագիտական առողջապահական հաստատության միջավայրին: Եթե Keeler Direct գործիքների համար պահանջվում է շարունակական աշխատանք էլեկտրական ցանցի մատակարարման ընդհատումների ժամանակ, խորհուրդ է տրվում, որ սարքը սնվի անխափան սնուցման աղբյուրից:
Էլեկտրաէներգիայի հաճախականության (50/60 Հց) մագնիսական դաշտ: IEC 61000-4-8	30 Ա/մ	30 Ա/մ	Էլեկտրաէներգիայի հաճախականության մագնիսական դաշտերը պետք է լինեն տիպիկ մասնագիտական առողջապահական հաստատության միջավայրին բնորոշ մակարդակի:

Նշում՝ U_T փ.հ. /փոփոխական հոսանք/ցանցի լարումը նախքան փորձարկման մակարդակի կիրառումը:

Դիմադրողականության փորձարկում	IEC 60601 Փորձարկման մակարդակ	Համապատասխանության մակարդակ	Էլեկտրամագնիսական միջավայր - ուղեցույց
			Դյուրակիր և շարժական ՌՀ հաղորդակցման սարքավորումները չպետք է օգտագործվեն թվային տեսախցիկի հավաքակազմի ցանկացած մասին մոտ, այդ թվում՝ մալուխներին, հաղորդիչի հաճախականության նկատմամբ կիրառվող հավասարումից հաշվարկվող առաջարկվող հեռավորություններին համապատասխան:
Անցկացված ՌՀ IEC 61000-4-6	6 Վ/ամք 150 կՀց-ից 80 ՄՀց	6 Վ	**Առաջարկվող բաժանման հեռավորություն** d = 1.2 √ p
Ճառագայթված ՌՀ IEC 61000-4-3	10 Վ/մ 80ՄՀց-ը 2.7 ԳՀց-ի	10 Վ/մ	d = 1.2 √ p 80 ՄՀց-ից 800 ՄՀց d = 2.3 √ p 800 ՄՀց-ից 2.7 ԳՀց

Դիմադրողականության փորձարկում	IEC 60601 Փորձարկման մակարդակ	Համապատասխանության մակարդակ	Էլեկտրամագնիսական միջավայր - ուղեցույց
			Որտեղ p-ն հաղորդիչն արտադրողի համաձայն՝ հաղորդիչի առավելագույն ելքային հզորությունն է՝ արտահայտված վատերով (Վտ), d –ը առաջարկվող տարանջատման հեռավորությունն է՝ արտահայտված մետրերով (մ): Ֆիքսված ՌՀ հաղորդիչներից Էլեկտրամագնիսական դաշտի հզորությունը էլեկտրամագնիսական կայքի ուսումնասիրության համաձայն[1], պետք է լինի յուրաքանչյուր հաճախականության տիրույթի համապատասխանության մակարդակից ցածր:[2] Միջամտություններ կարող են առաջանալ այս խորհրդանիշով նշված սարքավորումների մերձակայքում:

Նշում 1՝ 80 ՄՀց և 800 ՄՀց մակարդակներում կիրառվում է ավելի բարձր հաճախականության տիրույթ:
Նշում 2՝ Այս ուղեցույցները կարող են կիրառելի չլինել բոլոր իրավիճակներում: Էլեկտրամագնիսական տարածման վրա ազդում են կառույցներից, առարկաներից և մարդկանցից բխող կլանումն ու արտացոլումը:
1 դաշտի հզորությունը ֆիքսված հաղորդիչներից, ինչպիսիք են՝ բազային կայանները (բջջային/անլար), հեռախոսները և ցամաքային շարժական ռադիոընդունիչները, սիրողական ռադիոն, AM և FM ռադիոհեռարձակումը և հեռուստատեսային հեռարձակումը, չեն կարող տեսականորեն կանխատեսվել ճշգրտությամբ: Էլեկտրամագնիսական միջավայրը ֆիքսված ՌՀ հաղորդիչների առկայությամբ գնահատելու համար պետք է հաշվի առնել էլեկտրամագնիսական կայքի հետազոտությունը: Եթե Direct գործիքների օգտագործման վայրում դաշտի չափված ուժը գերազանցում է վերը նշված ՌՀ համապատասխանության համապատասխան մակարդակը, ապա պետք է հետևել Direct գործիքների նորմալ աշխատանքի ընթացքին: Եթե դիտարկվում է ոչ նորմալ աշխատանք, ապա կարող են անհրաժեշտ լինել լրացուցիչ միջոցառումներ, ինչպիսիք են Direct գործիքների վերադիրքավորումը կամ տեղափոխումը:
2. 150 կՀց-ից մինչև 80 ՄՀց հաճախականությունների սահմաններում դաշտի լարումը պետք է լինեն 10 Վ/մ-ից պակաս:

9.3 ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՎՏԱՆԳ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվող տեղադրման հեռավորությունները դյուրակիր և շարժական ՌՀ հաղորդակցման սարքավորումների և Keeler Direct գործիքների միջև:

Keeler Direct գործիքները նախատեսված են էլեկտրամագնիսական միջավայրում օգտագործման համար, որտեղ ճառագայթահարված ՌՀ խախտումները վերահսկվում են: Keeler Direct գործիքների գնորդը կամ օգտագործողը կարող է օգնել կանխել էլեկտրամագնիսական միջամտությունը՝ պահպանելով նվազագույն հեռավորությունը դյուրակիր և շարժական ՌՀ հաղորդակցման սարքավորումների (հաղորդիչների) և Keeler գործիքների միջև, ինչպես առաջարկվում է ստորև՝ ըստ կապի սարքավորումների առավելագույն ելքային հզորության:

Հաղորդիչի գնահատված առավելագույն ելքային հզորություն (Վ)	Տարանջատման հեռավորությունը՝ ըստ հաղորդիչի հաճախության (մ)		
	150 կՀց-ից 80 ՄՀց d = 1.2√ p	80 ՄՀց-ից 800 ՄՀց d = 1.2√ p	800 ՄՀց-ից 2.7 ԳՀց d = 2.3√ p
0.01	0.12	0.12	0.23
0.1	0.38	0.38	0.73
1	1.2	1.2	2.3
10	3.8	3.8	7.3
100	12	12	23

Վերևում նշված առավելագույն ելքային հզորությամբ հաղորդիչների համար առաջարկվող հեռավորությունը մետրերով (մ) կարող է որոշվել՝ օգտագործելով հաղորդիչի հաճախականության նկատմամբ կիրառվող հավասարումը, որտեղ p-ն հաղորդիչի առավելագույն ելքային հզորության գնահատումն է վատտերով (Վտ)՝ ըստ հաղորդիչ արտադրողի:

Նշում 1՝ 80 ՄՀց և 800 ՄՀց մակարդակներում կիրառվում է ավելի բարձր հաճախականության տիրույթ:

Նշում 2՝ Այս ուղեցույցները կարող են կիրառելի չլինել բոլոր իրավիճակներում: Էլեկտրամագնիսական տարածման վրա ազդում են կառույցներից, առարկաներից և մարդկանցից բխող կլանումն ու արտացոլումը:

10. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Օֆտալմոսկոպը / ռետինոսկոպը / օտոսկոպը, էլեկտրամատակարարումը (EP29-32777) իր լիցքավորման բլոկով (1941-P-5289 և 1941-P-5326) միասին կազմում են Բժշկական էլեկտրական համակարգը, որը սահմանված է EN/IEC 60601-1 կանոնակարգում:


Էներգամատակարարում

Մուտքային ցանցի տվյալները	100-240 Վ – 50/60 Հց
Էլեկտրամատակարարման նոմինալ հզորությունը	12 Վ. 2.5 ա/վ
Գործարկումը	Առավելագույնը 15 րոպե՝ ՄԻԱՑՐԱԾ Նվազագույնը 10 րոպե՝ ԱՆԶԱՏԱԾ
Դասակարգում.	2-րդ կարգի սարքավորումներ B տեսակի պաշտպանություն էլեկտրահարումից

Գործիքի գլխիկներ և բռնակներ

Մուտքային լարումը (ՀՀ)	3V 2xAA ալկալինային մարտկոցներ - ԿԱՊՈՒՑՏ 3.75 Վ լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց - ԿԱՐՄԻՐ (EP39-18918) 3.65 Վ NiMH վերալիցքավորվող մարտկոց - ՍԱ (1919-P-7149)

Բնապահպանական պայմաններ.

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ		
		
	Ցնցում (առանց փաթեթավորման)	10 գ, տևողությունը՝ 6 ր

ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
		
ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
		
	Թրթռում, սինուսոիդային	10 Հց-ից 500 Հց. 0.5գ
	Ցնցում	30 գ, տևողությունը՝ 6 ր
	Հարված	10 գ, տևողությունը՝ 6 ր

11. ՊԱՐԱԳԱՆԵՐ և ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ

Տարր	**Մասի համար**
Բևութ/Vista հալոգեն լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7034
Բևութ/Vista հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7042
Բևութ/Vista LED լամպ 2.8 Վ/3.6 Վ (1-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7229
Ստանդարտ օֆտալմոսկոպներ	
Ստնդ օտոսկոպի հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7031
Ստնդ օտոսկոպի հալոգեն լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7023
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7106
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7114
Օֆտ LED հավաքակազմ	1011-P-5610
Օֆտալմոսկոպներ բժշկի	
Օպտիկամանրաթելային օտոսկոպի հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7066
Օպտիկամանրաթելային օտոսկոպի հալոգեն լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7058
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7106
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7114
Օֆտ Led հավաքակազմ	1011-P-5610

Տարր	Մասի համար
Օպտիկամանրաթելային օտոսկոպ	
Օպտիկամանրաթելային օտոսկոպի հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7066
Օպտիկամանրաթելային օտոսկոպի հալոգեն լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7058
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7106
Ստնդ/Բժշկի/Պրոֆ քսենոնային լամպ 3.6 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7114
1011-P-5610 Օֆտ LED հավաքակազմ	
Pocket	
Ստնդ օտոսկոպի հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1015-P-7031
Pocket օֆտ.I հալոգեն լամպ 2.8 Վ (2-ից բաղկացած փաթեթ)	1011-P-7050
Այլ - Լիցքավորիչներ	
Լիթիումային կրկնակի լիցքավորիչ	1941-P-1368
Լիթիումային մինի լիցքավորիչ	1941-P-1341
3.6 Վ լիթիումային մարտկոց	EP39-18918
Այլ - Գունային կոդավորմամբ մամլակներ	
Slimline բռնակով թևք - վարդագույն	1901-P-7028
Slimline բռնակով թևք - կանաչ	1901-P-7036
Slimline բռնակով թևք - կապույտ	1901-P-7044
Slimline բռնակով թևք - սև	EP29-05365
Slimline բռնակով թևք խառը գույների	1901-P-7052
Այլ – Ընդարձակիչ – Jazz ուլտրա	
Jazz 2 մմ բազմակի օգտագործման ընդարձակիչ (10-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7036
Jazz 2.5 մմ բազմակի օգտագործման ընդարձակիչ (10-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7044
Jazz 3 մմ բազմակի օգտագործման ընդարձակիչ (10-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7052
Jazz 4 մմ բազմակի օգտագործման ընդարձակիչ (10-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7060
Jazz 5 մմ բազմակի օգտագործման ընդարձակիչ (10-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7079
Jazz 2 մմ ընդարձակիչ (100-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7087
Jazz 2.5 մմ ընդարձակիչ (100-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7095
Jazz 3 մմ ընդարձակիչ (100-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7108
Jazz 4 մմ ընդարձակիչ (100-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7116
Jazz 5 մմ ընդարձակիչ (100-ից բաղկացած փաթեթ)	1514-P-7124

12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հին էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների ուտիլիզացում



Ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա նշված այս խորհրդանիշը և հրահանգները ցույց են տալիս, որ այս ապրանքը չպետք է դիտարկվի որպես կենցաղային թափոն:

Խրախուսվում է, որպեսզի այս սարքավորումներն իրենց ծառայելու ժամկետի ավարտին վերամշակվեն և վերաօգտագործվեն՝ հետապնդելով շրջակա միջավայրի վրա ԷԷՍԹ-ի (Էլեկտրական էլեկտրոնային սարքավորումների թափոններ)ազդեցության և աղբավայրեր մտնող ԷԷՍԹ ծավալի նվազեցման նպատակը:

Եթե ձեզ ավելի շատ տեղեկատվություն է անհրաժեշտ հավաքածուի վերաօգտագործման և վերամշակման վերաբերյալ, ապա կապվեք B2B համապատասխանության հետ՝ 01691 676124 (+44 1691 676124) հեռախոսահամարով: (Միայն Մեծ Բրիտանիայում):

Սարքի հետ կապված ցանկացած լուրջ միջադեպ պետք է հաղորդվի արտադրողին և ձեր անդամ պետության իրավասու մարմնին:

Կոնտակտային տվյալներ

Արտադրող
Keeler Լիմիթիդ
Քլեվեր Հիլ Ռոուդ
Ուինդզոր
Բերքշիր
SL4 4AA Մեծ Բրիտանիա
Անվճար հեռախոսահամար՝ 0800 521251
Հեռ.՝ +44 (0) 1753 857177
Ֆաքս՝ +44 (0) 1753 827145

ԱՄՆ վաճառքի գրասենյակ
Keeler ԱՄՆ
Ֆենիքսվիլ Փայկ, 3222
Շենք թիվ 50
Մալվերն, ՊԱ 19355 ԱՄՆ
Անվճար հեռախոսահամար՝ 1 800 523 5620
Հեռ.՝ 1 610 353 4350
Ֆաքս՝ 1 610 353 7814

Չինաստանի գրասենյակ
Հալմա Չայնա Գրուպ
名称：沃迈（上海）机电有限公司
地址：上海市闵行区金都路1165弄123号23幢一号厂房三层B座
电话：021-6151 9025

Հնդկաստանի գրասենյակ
Keeler Հնդկաստան
Հալմա Ինդիա Պվտ. Ltd./ՍՊԸ
Հողամաս՝A0147, ճանապարհ՝ 24
Վեյջլ արտադրական կոմպլեքս
Թեյն Ուեսթ - 400604, Մահարաշտրա
ՀՆԴԿԱՍՏԱՆ
Հեռ.՝ +91 22 4124 8001

EC REP
Վիզիոմետրիքս, U.L., Վինյալս, 131
08221 Տեռռասսա, Իսպանիա

EP59-11234 թողարկում 9 Թողարկման ամսաթիվ՝ 12/05/2021

CE

Keeler
– A world without vision loss –